ՍԻՐԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԴԻՐՔԵՐԸ ԵՐԿՐԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅՈՒՄ (1945—60-ական թվականներ)

Ս. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սիրիայում օտարազգի ձեռնարկատերերն անկախության հենց սկզբից շրջապատված էին ընիկ ազգաբնակչության եթե ոչ թշնամանքով, ապա անբարյացակամ վերաբերմունքով։ Դրա պատճառներից էին ինչպես կրոնա-էթնիկական գործոնները, այնպես էլ առևտրի, ֆինանսների ու վաշխառուական բնագավառներում փոքրամասնությունների վերնախավի մասնագիտացումը։ Հույն վաշխառուի և հայ առևտրականի նկատմամբ հակակրանքը տարածվում էր բոլոր հույների և հայերի վրա։ Այդ հակակրանքը խորանում էր նաև այն պատճառով, որ ազգային փոքրամասնությունները, հատկապես նրանց ունևոր հատվածը, երկար ժամանակ գտնվում էին գաղութային իշխանությունների հովանավորության տակ։ Այս ամենն անտեսանելի, բայց ամուր պատնեշով կանգնում էր ազգային փոքրամասնությունների ու ընիկ ազգաբնակչության միջև, իսկ մրցակցությունն ու կրոնական տարբերությունները բաժանում ու հակադրում էին նրանց։ Ազգային փոքրամասնությունների մեջ երկրի տնտեսական կյանքում ամենաակտիվ մասնակցությունը ցուցաբերում էին հայերը։ Մասնագիտական բարձր որակավորումը և գործարարությունը նրանց հնարավորություն էին տալիս զբաղվելու բժշկությամբ, իրավաբանությամբ, մետաղամշակմամբ, մեքենաների ու հաստոցների վերանորոգմամբ, մի խոսքով, աշխատելու այն բոլոր ոլորտներում, որոնց կարիքը զգացվում էր Սիրիայում[1]։

Հյուրընկալության առաջին դրսևորումներից հետո հայերի նկատմամբ վերաբերմունքը գնալով ավելի զուսպ էր դառնում։ Այդ տարիներին Սիրիա գաղթող հայերը հաճախ բարձր մասնագիտական որակավորում ունենալով հանդերձ, համաձայն էին կատարելու ցանկացած աշխատանք, թեկուզ ցածր վարձատրությամբ, միայն թե պահպանեին իրենց գոյությունը։ Բանն այն է, որ այդ երկրի արյունաբերությունը սկզբնավորման փուլում էր և չէր կարող ապահովել ամբողջ աշխատունակ հայ բնակչության զբաղվածությունը։ Սիրիայում հայերից շատերն աշխատում էին որպես որակյալ բանվորներ ու արհեստագործներ, երբեմն էլ ստեղծում իրենց փոքր բիզնեսը[2]։ Տոմարին գրում է, որ «Մերձավոր արևելքում «հայ» հասկացությունը վաղուց ձուլվել է «արհեստագործ» հասկացության հետ, այնպես, ինչպես հրեան վաշխառուի և չերքեզը ոստիկանի հետ»[3]։

Սիրիայում հայերը հիմնեցին մի շարք մանուֆակտուրաներ, որոնք զբաղվում էին մեծ գորգերի, մետաքսե գործվածքեղենի արտադրությամբ, կաշվի, մորթեղենի վերամշակմամբ, սպիրտի թողարկումով։ Հայերի ձեռքում էր գտնվում «ալաջա» գործվածքի արտադրությունը. միայն Հալեպում դրանով զբաղված էր 4 հազար մարդ։ Գորգագործությամբ գործնականում զբաղվում էին միայն հայերը։ Առևտրով պարապող հայերի մասին Սիրիայում ասում էին, որ «նրանք արվեստի մի աստիճանին հասուցած են առևտուրը»[4]։ Հայերը փոքր դեր չեն խաղացել սիրիական էկոնոմիկայի զար-

---

[1] Robin Feden. Syria and Lebanon 1965, p. 24.

[2] A. Chabry. Politique of minorities on Proche-Orient Lesraision, 1984 p. 33.

[3] S. Tomary. Minoritis in the Middle East in "Middle East Yearbook". London, 1979. p. 41.

[4] Հ. Խ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազատագրական շարժումներին, Երևան, 1968, էջ 23։

գացման գործում, մասնավորապես ոսկերչության, ձուլման և կահույքի արտադրության բնագավառներում։ Դեռևս ֆրանսիական մանդատի տարիներին հայերը Սիրիայում կառուցում էին տարբեր ձեռնարկություններ[5]։

1940-ական—1950-ական թվականների սկզբին երկրում գոյություն ունեին հետևյալ հայկական ֆիրմաները. «Անթուան Օհանյան» (հիմնվել էր Հալեպում՝ 1918 թ.)—զբաղվում էր մեքենաների, պահեստամասերի, մեխանիկական արհեստանոցների ու տարբեր արդյունաբերական ձեռնարկությունների համար սարքավորումների ներմուծմամբ ու կոմիսիոն առևտրով[6]։ «Խանդողյան եղբայրներ» (հիմնվել էր 1927 թ.) զբաղվում էր գյուղատնտեսական մեքենաների ու ավտոմեքենաների համար պահեստամասերի ներմուծմամբ և կոմիսիոն առևտրով։ Ֆիրման ուներ իր մեխանիկական արհեստանոցները[7]։ «Աղար Բեդիկյան» (հիմնվել էր 1920-ական թվականներին)—զբաղվում էր հնաոճ ու ժամանակակից կահույքի արտադրությամբ և առևտրով[8]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սիրիայում իրագործվեցին լուրջ միջոցառումներ, որոնք հետամտում էին գաղութային անցյալից ժառանգված սոցիալ-տնտեսական հետամնացության հաղթահարումը, անկախ ազգային էկոնոմիկայի ստեղծումը, ազգային արդյունաբերության զարգացումը։

Անկախության տարիներին Սիրիայի բուրժուազիան տնտեսական ակտիվության աճի ու ծավալման աննախադեպ հնարավորություններ ստացավ։ 1949 թ. ընդունված օրենքի համաձայն կառավարությունը երաշխավորում էր արդյունաբերական ձեռնարկությունների զարգացմանը տրամադրվող վարկերը, որոնք տրվում էին «Սիրիայի և Լիբանանի բանկի» կողմից։ Կառավարությունը հասավ նաև այն բանին, որ իջեցվեցին այդ վարկերի տոկոսները[9]։ Բուրժուազիայի շահերից ելնելով, 1950 թ. չեղյալ համարվեց մաքսային ունիան Լիբանանի հետ։ Դա սիրիական առևտրականներին հնարավորություն տվեց արտաքին առևտրական գործարքները վարել առանց լիբանանյան առևտրական բուրժուազիայի միջնորդության[10]։

1952—1954 թթ. արգելվեց արտասահմանից գրեթե բոլոր այն ապրանքների ներմուծումը, որոնք հնարավոր էր արտադրել երկրի ներսում։ Արգելվեցին 58 անվանումների ապրանքների ներմուծումը, ներառյալ գործվածքեղենը, լուցկին, յուղը, պահածոյացված մրգերը, բանջարեղենը և այլն։ Այդպիսով, տեղական բուրժուազիան ազատվեց օտարերկրյա մրցակցությունից։

1952 թ. սեպտեմբերին ընդունվեց դեկրետ, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց արդյունաբերության զարգացման, հատկապես նոր ձեռնարկությունների ստեղծման համար։ Նոր ստեղծվող ձեռնարկությունները 6 տարի ժամկետով ազատվում էին լիցենզիոն վճարից, մասնակիորեն՝ եկամտահարկից և ռեզերվային ֆոնդ փոխանցվող եկամուտներից գանձվող հարկից[11]։ Այս բոլոր միջոցների շնորհիվ Սիրիայի էկոնոմիկայում տեղի ունեցան էական տեղաշարժեր։

---

[5] А. М. Захаров, Социальная структура общества и рабочий класс независимой Сирии (дисс. на соиск. уч. ст. канд. ист. наук, М., 1973, с. 120).

[6] Quide d'Orient. Fondee 1937. Pour le commerce l inolustrie et les profesions liberales dans les pas arabs. Beyrouth 1953, p. 330.

[7] Նույն տեղում, էջ 331։

[8] Նույն տեղում, էջ 263։

[9] احماد السمان محاضرات في اقتصاد سوريا القاهره ص ٥

[10] В. В. Вавилов, Социально-экономические преобразования в Сирии (1946—1970), М., 1972, с. 108—109.

[11] احماد السمان ص ٣٤

Հիմնվելով պետության ֆինանսական օգնության վրա, հետպատերազմյան առաջին իսկ տարիներին սիրիական բուրժուազիան նկատելիորեն ընդլայնեց առևտրական գործարքները, ձեռնամուխ եղավ գործող ձեռնարկությունների ընդլայնմանը, ստեղծեց տասնյակ խոշոր և հազարավոր մանր ձեռնարկություններ։ Արդյունաբերական ձեռնարկության զարգացումն անկախության տարիներին (գլխավորապես թեթև արդյունաբերության բնագավառում) նպաստեց առևտրական ակտիվության բավականին զգալի զարգացմանը ներքին, որոշ չափով նաև արտաքին, շուկաներում, դրանով իսկ նաև՝ մեծ դրամական միջոցների կուտակմանը գործարար շրջանների ձեռքում։ Եթե 1945 թ. երկրում գործում էին միայն 5 համեմատաբար խոշոր առևտրական ընկերություններ՝ 2,5 մլն սիրիական ֆունտ կապիտալով, ապա 1962 թ. դրանց թիվը հասավ 75-ի՝ 95,3 մլն սիրիական ֆունտ կապիտալով[12]։

Մանր և միջին արդյունաբերական ու ակցիոներական ընկերությունների գործունեությանը հայ ձեռնարկատերերը սկսեցին մասնակցել 1940-ական թվականների վերջերից։ Այդ ընկերություններում նրանց բաժինը կազմում էր բոլոր կապիտալ ներդրումների 10 %-ը[13]։ Որոշ ընկերություններում հայ գործարարների կապիտալները հասնում էին ընդհանուր կապիտալների գրեթե կեսին։ Այսպես, օրինակ, «Գյուղական միության» ունեցած 50 հազար ֆունտ սիրիական ֆոնդից 20 հազարը հայերինն էր, ռետինի արտադրության քաղաքացիական ընկերությունում՝ 1200-ից 410-ը և այլն[14]։ 1953 թ. Սիրիայում կար 23 հայկական, 4 խառը (հայ-արաբական) ընտանեկան ընկերություններ[15] և 157 հայկական անհատական ֆիրմաներ[16]։

1950-ական թվականներին 32 հայազգի ձեռնարկատերեր զբաղվում էին արդյունաբերական գործունեությամբ, ունեին խոշոր և միջին ձեռնարկություններ։ Տեղին է մեջբերել Սիրիայի նախկին պրեզիդենտ Շյուքրի Քուաթլիի 1957 թ. արած հետևյալ հայտարարությունը. «Մենք հայերին սիրում ենք այն բանի համար, որ նրանք մեր երկրում զարգացրին արհեստներն ու արդյունաբերությունը՝ դրանով իսկ նպաստելով մեր տնտեսական վերելքին»[17]։ Արևմտյան հետազոտող Ռ. Ֆեդենն իր հերթին գրում է, որ հայերի գիտելիքներն ու աշխատունակությունը նրանց հնարավորություն էին տալիս աշխատելու բոլոր այն ոլորտներում, որոնց կարիքը զգացվում էր Սիրիայում[18]։ 1954 թ. Դավիթ Կակաջյանն ու Արթին Շառոյանը հիմնեցին բամբակազտիչ հաստոցներ արտադրող գործարան, որը, ունենալով ընդամենը 15 բանվոր, թողարկում էր ամսական 20 հաստոց։ Այդ նույն ժամանակ Ա. Դեմիրճյանը հիմնեց մետաղամշակման գործարան, որն արտադրում էր մեքենաների և տարբեր հաստոցների պահեստամասեր։ Հետագայում այդ գործարանը սկսեց արտադրել բամբակազտիչ հաստոցներ[19]։ Կապալների բնագավառում ամենաերևելի հայ ձեռնարկատերը Ջորջ Միքայելյանն էր[20]։ Նա Հալեպում ուներ բամբակի զտման գործարան և ակցիաներ երկու

---

12 В. Вавилов, И. Симантовский, Сирия, М., 1975, с. 40.

13 جريدة الرسمية عام ١٩٥٠ الاعداد ٤٢ عام ١٩٥٩ عدد ٢٧ عام ١٩٦٠
رفعت العلى المصلاح الاقتصادى فى سوريا وما يجب تعرغة عن

14 Նույն տեղում։

15 Quide d'Orient, p. 365—372.

16 Նույն տեղում, էջ 363—364։

17 Л. Х. Тер-Мкртчян, Армяне в странах Арабского Востока, М., 1965, с. 34.

18 R. Fedden, Նշվ. աշխ., էջ 240։

19 السرعات واوطا عصا دمشق ١٩٥٤

20 نمعة زيدات عانفنا العربى بيروت ١٩٥٦

խոշոր ակցիոներական ընկերություններում՝ Լաթաքիայի «Ասֆալտի քաղաքացիական ընկերությունում» և Համայի «Ջուգունի ձուլման ընկերությունում»[21]։ Տարիներ շարունակ Ջ. Միքայելյանը Հալեպի առևտրի պալատի անդամ էր[22]։

Խոշոր հայ գործարարներից էր Արթուր Խոշմեթլյանը, որ մասնագիտական կրթությունը ստացել է Փարիզում, ապա վերադառնալով Դամասկոս՝ հիմնել է ակնոցի արտադրություն և վաճառք, իսկ 1956-ից բացել է մասնագիտացված խանութ[23]։ Խոսրով Թուսուզյանը դրամի (վալյուտայի) փոխանակման գործարքները համատեղում էր արդյունաբերական գործունեության հետ։ Զբաղվում էր ձիթապտղի, յուղի, օճառի, տեխնիկական յուղերի արտադրությամբ[24]։

Արաբական Միացյալ Հանրապետության գոյության ժամանակաշրջանում (1958—1961 թթ.) հայերը, ինչպես Սիրիայում, այնպես էլ Եգիպտոսում, բավականին տուժեցին նասերի ազգայնացման քաղաքականությունից։ Շարբե ամուսինների կարծիքով, «Թեև ռեֆորմների ծանրությունը թվում էր, դիպել էր բոլոր ազգային փոքրամասնություններին (առկա էր նաև ոչ-պաշտոնական խտրականության փաստը), մեծագույն տանջանքներն ու զրկանքները բաժին ընկան Եգիպտոսում ապրող ղպտիներին և Եգիպտոսում ու Սիրիայում ապրող հայերին, որը, հավանաբար, ըստ իրերի տրամաբանության, ի թիվս այլ պատճառների, ավելի բարձր տնտեսական մակարդակի հետևանք էր»[25]։ Դժվարացավ ներմուծման հետ կապված գործունեության որոշ տեսակներով զբաղվելը։ Բայց «անջատման ռեժիմի» օրոք (1961 թ. սեպտեմբեր—1962 թ. փետրվար) տեղի ունեցավ պետական սեկտորի և նրա սեփականության կրճատում։ Նասերի կողմից ազգայնացված բանկերն ու բազմաթիվ արդյունաբերական ընկերությունները կրկին վերադարձվեցին մասնավոր տերերին։ Բուրժուազիայի շահերից ելնելով, երկրում որոշ չափով թուլացվեց վալյուտային և մաքսային հսկողությունը։ Բուրժուազիայի պահպանողական խավերը կրկին սկսեցին պետության տնտեսական գործունեությունը կողմնորոշել դեպի մասնավոր նախաձեռնության զարգացումը։

1960 թ. Հալեպի առևտրի պալատում գրանցված էր հայերին պատկանող 34 արդյունաբերական ձեռնարկություն[26]։ Մինչև 1963 թ. Սիրիայի խոշոր քաղաքներում կար տնային կահույքի պատրաստման 82 մանր ձեռնարկություն, որոնցից 8-ը պատկանում էր հայերին։ Հայ ձեռնարկատերերն ունեին նաև օճառի 3 գործարան, 1 սղոցարան, 2 գորգագործական ձեռնարկություն, հացի փռեր, կաշեգործական արհեստանոցներ և այլն[27]։ 1962 թ. Սիրիայի խոշորագույն կապալառուների թվում (ընդամենը 40) նշվում են նաև 4 հայերի (Ջ. Միքայելյան, Մ. Դեմիրճյան, Ա. Յաղուբյան և Ն. Յաղուբյան) անուններ[28]։

1960-ական թվականների սկզբին երկրի ապահովագրական ընկերություններից մեկը պատկանում էր հայազգի Ջ. Ալթունյանին, որը միաժամանակ Եգիպտոսի Ազգային ապահովագրական ընկերության գործակալն էր[29]։

---

[21] الجريدة الرسمية عام ١٩٥٩ عدد ٤٧ عام ١٩٦٠

[22] Alepo. Chambre du commerce. Economic bulletin of the Chambre of Commerse of Aleppo. Syria, 1960, 35—55.

[23] Guide Arabe. Tour le commerce l inoinstrie et les professions liberales and les pays arabs. Beyrouth 1962. p. 351.

[24] Նույն տեղում։

[25] L. Chabri, A. Chabry, նշվ. աշխ., էջ 88։

[26] Alepo. Chambre du Commeree..., p. 3 —5 .

[27] العرارات الماشتراكية دمشق ١٩٦٥ ص ٥

[28] В. Вавилов, И. Симантовский, նշվ. աշխ., էջ 48։

[29] Նույն տեղում, էջ 527։

1965 թ. հունվար-մայիսին Սիրիայի կառավարությունն ընդունեց արդյունաբերական առաջատար ճյուղերի ազգայնացումը վավերացնող մի շարք դեկրետներ։ Ընդհանուր առմամբ պետականացվեց 108 արդյունաբերական ձեռնարկություն՝ 230,3 մլն ֆունտ ընդհանուր կապիտալով[30]։ Դրանց թվում 1965 թ. ազգայնացվեցին հայ ձեռնարկատերեր Հովհաննիսյանին և Մասարջյանին, Նիկողոսյանին, Կ. Շարալյանին, Մանուկյանին, Մ. Գաբրիելյանին, Ջ. Միքայելյանին, Մ. Խաչատրյանին և այլոց պատկանող խոշոր ձեռնարկությունները, որոնք զբաղվում էին էլեկտրամարտկոցների արտադրությամբ, կաշվի վերամշակմամբ, կտորեղենի ներկումով, բամբակի զտմամբ, հացահատիկի փոխադրմամբ և այլն[31]։

Քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում սիրիահայերի 65 %-ն ապրում էր Հալեպում[32], ապա դիտարկենք այդ քաղաքում հայ ձեռնարկատերերի ղրաված դիրքը՝ հիմնվելով «Հալեպի Առևտրի պալատի տնտեսական տարեգրքի» վրա։ Պարզվում է, որ հալեպահայերն իրենց ձեռքում էին կենտրոնացրել ավտոհավաքակայանների և ավտոտեխսպասարկման կայանների մեծամասնությունը։ Այսպես, 1962 թ. Հալեպում գրանցված 14 նմանատիպ ձեռնարկություններից 9-ը պատկանում էր հայերին[33]։ Ըստ վերոհիշյալ տարեգրքի, 1962 թ. քաղաքի 8 գորգագործական ֆաբրիկաներից 7-ը պատկանում էին հայերին[34], քաղաքի միակ մարտկոցներ արտադրող գործարանի տերը նույնպես հայ էր։ Հալեպում ալյումինե ամանեղենի արտադրության երկու ձեռնարկությունները, աթոռների ու մետաղե գրասենյակային պիտույքների, սինթետիկ ապրանքների, ռետինե կոշկեղենի արտադրությունները ևս ամբողջովին հայերի ձեռքում էին[35]։ Ընդհանուր առմամբ 1960-ական թվականներին Հալեպի հայ ձեռնարկատերերին էին պատկանում քաղաքի ֆաբրիկաների ու գործարանների 29,7 %-ը։

Ինչ վերաբերում է մանր և միջակ ձեռնարկատերերին, ապա նրանք զբաղված էին արդյունաբերական գործունեության տարբեր ոլորտներում, ձեռնարկություններ ունեին քիմիական, սննդի, մետաղամշակման արդյունաբերության բնագավառներում (սառնարաններ, պոմպեր, քարհանքների, շինարարական արդյունաբերության սարքավորումներ, հաստոցների պահեստամասեր)։

Հայերի դրսևորած ակտիվությունը պակաս չէր նաև առևտրի բնագավառում։ Ինչպես նշում է Ա. Հաուրանին, հայերը հաստատուն դիրքեր ունեին երկրի առևտրում և արդյունաբերության տարբեր ոլորտներում[36]։ Անկախության տարիները ևս դարձան գործարար ակտիվության հետագա ծավալման տարիներ։ 1951 թ. «Արաբական աշխարհ» հրատարակության մեջ հիշատակված 198 հայկական ֆիրմաներից ու միավորումներից 150-ը զբաղվում էր առևտրով, գործում էին նաև 3 խառը սիրիա-հայկական միավորումներ[37]։ Այդ ֆիրմաներից մի քանիսը համատեղում էին արտադրությունն ու առևտուրը։ Առևտրի (ներմուծում և արտահանում) ընդհանուր ծավալում հայերի մասնակցությունը հասնում էր մոտավորապես 25 %-ի[38]։ Որոշ առևտրական հաստատությունների կեսը հայերին էր պատկանում։ Հմայակ և Սանոս Սանոսյանների ընտանեկան ֆիրման իրականացնում էր ֆաբրիկաների գործակալի ֆունկցիաները և դրանց պատվերներով ներմուծում բոլոր անհրաժեշտ սար-

---

30 العرازات الماشتراكية ص ٥١ ٥٢ ٥٦

31 Quide Arabe..., p. 556.

32 Statistical Abstract of Syria, Damascos, 1955, p. 72—95.

33 Quide Arabe..., p. 560.

34 Alepo. Chambre du commerce, p. 45.

35 Նույն տեղում։

36 H. Haurani, Minorities in the Arab World. L. Oxford Un-ty Pre. 1917. p. 38.

37 Quide de Orient..., p. 261—274.

38 Alepo. Chambte de commerse..., p. 45.

քավորումները (մեքենաներ, շարժիչներ, պահեստամասեր, գյուղատնտեսական մեքենաներ)[39]։ «Կրիկորյան և Կ միավորումը» ոչ միայն Սիրիայի, այլև ողջ Մերձավոր Արևելքի տարբեր ֆաբրիկաների գործակալ էր։ Այն արդյունաբերության և գյուղատնտեսության համար ներմուծում էր անհրաժեշտ մեքենաներ ու սարքավորումներ, կարի մեքենաներ, մասնակցում էր գյուղատնտեսական արտադրանքի արտահանմանը։ Ֆիրման, որի շտաբ-կայանը գտնվում էր Դամասկոսում, գործակալություններ ուներ Բեյրութում (Հալեպում, դուստր-բաժանմունք՝ Ամմանում (Հորդանան)[40]։ Կոմիսիոն (միջնորդական) գործունեությանը մասնակցում էին նաև Խանգոզյան եղբայրների և Անտուան Օհանյանի ֆիրմաները[41]։ Սիրիայում 1951 թ. կարելի էր առանձնացնել մոտ 20 հայկական ֆիրմաներ, որոնք զբաղվում էին միջնորդությամբ, մեծածախ առևտրով, ներմուծման-արտահանման գործարքներով[42]։ Մնացած միավորումներն ու ֆիրմաները գործում էին ներքին առևտրի ոլորտում[43]։

1950—1960-ական թվականներին հայ գործարար շրջանների գործունեությունը համեմատելիս ուշադրություն է գրավում այն փաստը, որ պահեստամասերի, էլեկտրական և ռադիոսարքավորումների ու սառնարանների վաճառքով զբաղվող ընկերությունների և ֆիրմաների թիվը 13 միավորով ավելացել էր։ Հագուստի, կոշկեղենի և գործվածքեղենի վաճառքով զբաղվող ֆիրմաների թիվը 1960 թ. 17 միավորով ավելի էր, քան 1951 թ.։ Առևտրի ոլորտից դուրս գործում էին 30 հայկական ֆիրմաներ ու միավորումներ[44]։

Այլազգի առևտրականների տնտեսական գործունեության բնութագրման համար կարևոր նշանակություն ունի այն փաստը, որ 74 ֆիրմաներ ու միավորումներ (71-ը հայկական, 3-ը այլ ազգային փոքրամասնություններին պատկանող), բացի ներքին առևտրից, կատարում էին արտահանման-ներմուծման գործարքներ[45]։ Ներմուծմամբ ու արտահանմամբ զբաղվող հայկական ֆիրմաների և միավորումների քանակի ավելացման միտումը խոսում է հայ առևտրական շրջանների գործարար ակտիվության զգալի ընդլայնման մասին։

Հայերին պատկանող առևտրական ֆիրմաներից կարելի է առանձնացնել միջիններն ու խոշորները։ Դրանցից են Կ. Խամուլյանինը (տեքստիլի ու պլաստմասսաների ներմուծում և առևտուր), Ջ. Միքայելյանինը (բամբակի արտահանում) և Ս. Գաբրիելյանինը (դեղագործական ապրանքների ներմուծում ու իրացում)։ Կարելի է թվարկել ևս երկու տասնյակ անուններ[46]։ Խոսելով համեմատաբար մանր ձեռնարկատերերի մասին, կարելի է նշել, որ Հալեպում գրանցված 9 գրավաճառներից երկուսը հայ էին[47]։ Սիրիայում լուսանկարչական գործը կենտրոնացած էր հայերի ձեռքին։ Նրանց էին պատկանում գրեթե բոլոր լուսանկարչական տաղավարներն ու լաբորատորիաները, ինչպես նաև լուսանկարչական սարքերի խանութները։ 1962 թ. Հալեպում եղած բոլոր 8 լուսանկարչական տաղավարները պատկանում էին հայերին, Դամասկոսում՝ 10-ից 3-ը, Հոմսում, Համայում և Լաթաքիայում՝ մեկական[48]։ Այդ նույն թվականի տվյալներով Հալեպում գործող լուսանկարչական սարքավորումների 6 խանութներից 5-ը պատկանում էին հայերին, Դամասկո-

---

39 Quide Arabe.... p 288.

40 Նույն տեղում, էջ 326։

41 Նույն տեղում, էջ 330—331։

42 Նույն տեղում, էջ 351։

43 Նույն տեղում, էջ 330—351։

44 Նույն տեղում, էջ 361—374, Alepo. Chambre de commerce..., p. 30—94.

45 Նույն տեղում, էջ 38—79։

46 العرارات الماشتراكية ص ٦٠

47 Alepo. Chambre de commerce..., p. 31.

48 Quide Arabe..., p. 591.

սում՝ 5-ից երկուսը[49]։ Հայերին էին պատկանում նաև օպտիկայի գրեթե բոլոր տաղավարները. 1962 թ. Դամասկոսի 6 տաղավարներից 3-ը հայերինն էր, իսկ Հալեպում հայերին էին պատկանում գործող 4 տաղավարները[50]։ Հալեպում գործող 3 ռեկլամային բյուրոները նույնպես պատկանում էին հայերին, իսկ գրանցից մեկի տերը՝ Հարությունն Չիլինկարյանը, ռեկլամի ազգային ծառայության տնօրենն էր[51]։ Դամասկոսում 1962 թ. կարի 6 տաղավարներից 3-ի տերերը հայեր էին, իսկ Հալեպում՝ 7-ից մեկը[52]։ Հայերի գերը նկատելի էր նաև ոսկերչության բնագավառում։ 1962 թ. Հալեպում գրանցված 28 ոսկերիչներից 12-ը հայ էին, Դամասկոսում՝ 21-ից երկուսը, Հոմսում՝ 7-ից մեկը, Լաթաքիայում՝ 4-ից մեկը[53]։ Հալեպի չորս ծաղկի խանութներից մեկի տերը նույնպես հայ էր[54]։ Այդ քաղաքում գեղարվեստական ձուլման բոլոր 3 արհեստանոցները պատկանում էին հայերին[55]։

Հայ ձեռնարկատերերից ոմանք մասնակցում էին սիրիացի ձեռնարկատերերի հետ վստահության վրա հիմնված ընկերությունների ստեղծմանը։ Քանակական առումով հայկական ֆիրմաների մեջ գերակշռում էին անհատական ֆիրմաները, երկրորդ տեղում ընտանեկան ֆիրմաներն էին, երրորդում՝ տարբեր միավորումներն ու ընկերությունները։ Դրանցից էր Ս. Գաբրիելյանին պատկանող խոշորագույն առևտրական ֆիրման, որը ազգայնացվել է 1965 թ.[56]։ 1946 թ. հետո, այն է՝ անկախության տարիներին, սիրիացիների կողմից ստեղծված առևտրական ակցիոներական ընկերություններին մասնակցում էին 4 հայ՝ 150 մլն սիրիական ֆունտ ընդհանուր կապիտալով[57]։

Անկախության տարիներին ստեղծված առևտրական ակցիոներական ընկերություններում սիրիացի ձեռնարկատերերը կազմում էին խոշոր ակցիոներների և հիմնադիրների 80 %-ը։ Սակայն քանակային գերազանցությունից ավելի կարևոր էր այն, որ կապիտալի ծավալով և յուրաքանչյուրին բաժին ընկնող միջին գումարով գերիշխող էր սիրիացիների դրությունը։ Յուրաքանչյուր սիրիացու կապիտալը կազմում էր միջին հաշվով 88 հազար սիրիական ֆունտ, այն դեպքում, երբ արաբական այլ երկրների ձեռնարկատերերից ամեն մեկին բաժին էր հասնում մոտ 21 հազար սիրիական ֆունտ[58]։ Ըստ կապիտալի միջին գումարի, հայերը միջանկյալ տեղ էին զբաղեցնում։

Հայերն ընդգրկված էին նաև բանկային-ֆինանսական ոլորտում, որտեղ նրանց դերը բավականին զգալի էր։ Այսպես, նրանք ստեղծել էին «Բանկ Լաթաքիան», որի սկզբնական կապիտալը 1 մլն սիրիական ֆունտ էր։ Բանկը գրանցված էր որպես ակցիոներական ընկերություն և պատկանում էր երկու ընտանիքների (Մաքենեջյան և Կարապետ Կիոմեջյան) անդամներին[59]։ Հայ 4 խոշոր ֆինանսիստներ մասնակցել են «Արաբական արևելքի բանկի» հիմնադրմանը, որի սկզբնական կապիտալը կազմում էր 1 մլն 763 հազար սիրիական ֆունտ[60]։

---

49 Նույն տեղում։
50 Նույն տեղում, էջ 590։
51 Նույն տեղում, էջ 593։
52 Նույն տեղում, էջ 597։
53 Նույն տեղում, էջ 533։
54 Նույն տեղում։
55 Նույն տեղում։
56 القرارة الاشتراكية ص ٦٠
57 الجريدة الرسمية
58 Նույն տեղում։
59 الجريدة الرسمية ١٩٥٣ ٦٧
60 الجريدة الرسمية ١٩٦٠ ١٨

«Հալեպի առևտրի պալատի տնտեսական տարեգրքում» գրանցված է 25 հայկական ֆիրմա, որոնք իրենց գործունեությունը կապել են տրանսպորտի, շինարարական կապալի և կոմունալ ծառայությունների հետ։ Դրանցից կարելի է առանձնացնել խոշորագույն հայ ձեռնարկատեր Ջորջ Միքայելյանի ֆիրման[61]։

Սիրիական 1655 ձեռնարկատերերի ստեղծած ակցիոներական ընկերություններից 15-ը հայերի մասնակցությամբ էր (0,9 %)[62]։

Հայերին էր պատկանում ակցիոներական բոլոր ընկերությունների միայն 1,07 %-ը՝ 2652 հազ. սիրիական ֆունտ ընդհանուր կապիտալով։

Այսպիսով, Սիրիայում հայերը միշտ հանդիսացել են ազգային բուրժուազիայի բաղկացուցիչ մասը։ Ինչպես նշում է ամերիկյան հետազոտող Թոմաս Գրինշիլդը, նրանք «Սիրիա գալուն պես դարձան իրենց ընդունած պետության մեջ գոյություն ունեցող տնտեսական համակարգի անքակտելի օղակը, ենթարկվեցին այդ համակարգին բնորոշ բոլոր սահմանափակումներին»[63]։ Այն հանգամանքը, որ Սիրիայի հայ ձեռնարկատերերը թեև հարուստ, բայց այնուամենայնիվ, ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ էին, հսկայական ազդեցություն էր թողնում նրանց գործարար ակտիվության, ինվեստիցիոն քաղաքականության, գործունեության մեթոդների և այլնի վրա։ Նրանք անընդհատ պետք է հաշվի առնեին քաղաքական իրադրության փոփոխությունները և հարմարվեին տվյալ պահին տիրապետող ուժերին։

ПОЗИЦИИ АРМЯНСКОЙ ЧАСТИ СИРИЙСКОЙ БУРЖУАЗИИ В ЭКОНОМИКЕ СИРИИ (1945—1960-ые годы)

С. М. МУРАДЯН

Резюме

Армянская буржуазия в Сирии всегда являлась составной частью национальной буржуазии. В период французского мандата насчитывалось едва ли с десяток армянских семей, принимавших активное участие в деловых операциях. В годы независимости создались наиболее благоприятные условия для инонациональных предпринимателей, хотя армяне, за исключением банка «Латакия», не учредили ни одной сугубо армянской компании. Крупнейшие предприниматели из числа армян вошли в состав учредительных компаний, созданных их сирийскими коллегами. Армянам принадлежали лишь 1,07% всех акционерных компаний с капиталом 2,652 тыс. сир. фунтов.

То обстоятельство, что армянские предприниматели были представителями хотя и богатого, но все-таки национального меньшинства, оказывало огромное влияние на их активность, инвестиционную политику, методы деятельности и т. д. Они всякий раз должны были учитывать изменения в политической ситуации.

---

[61] Alepo. Chambre du commerce..., p. 200.

[62] Նույն տեղում։

[63] Томас Гриншилдс, Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915—1939 г. (Научно-информационный бюллетень АН АрмССР, 1982, с. 14).

THE POSITION OF ARMENIAN PART OF SYRIAN BOURGEOISIE IN THE ECONOMICS OF SYRIA (1945—1960-s.)

S. M. MURADIAN

S u m m a r y

Armenian bourgeoisie in Syria was always the component of national bourgeoisie. During the French mandate there were scarcely some ten Armenian families, who took active part in business operations. During the years of independence the most favourable conditions were created for employers of other nationalities, although Armenians, with the exception of the bank "Latakija", didn't set up any special Armenian company. The biggest employers of Armenian nationality entered the structure of establishing companies, which were created by the Syrian colleagues. Armenians had only 1,07% of all joint-stock companies with the stock of 2,652 thousand of Syrian pounds.

The circumstance, that Armenian employers were the representatives although of the rich, but still of the national minority, exerted a great influence on their activity, investment policy, methods of activity, etc. Every time they had to take into account the changes in the political situation and please ruling forces of the given moment.